

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊԻ ՀԱՔԱՐԱԽՏՈՎ ՀԻՎԱՆՂՆԵՐԻ ԱՐՅԱՆ ԻՄՈՒՆՈՒՄՊԵՏԵՆՏ ԲՋԻՋՆԵՐՈՒՄ ԻԼ-2 ԵՎ ԻԼ-10 ՍԻՆԹԵԶԻ ԵՄՔՐԻՈՆԱԿ ԶԱԿԱՌՈՒՌՑՔԱՅԻՆ ՍՈՂՈՒԼՅԱՏՈՐ-ԿԱԽՅԱԿ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԷՖԵԿՏԸ

Աղաքսուհու Ե.Մ.¹, Մհրսթան Լ.Ն.², Զիլթան Ա.Վ.³, Ասազան Ս.Ա.³

- ¹ Մ. Հերացու անվ. Երևանի պետական բժշկական համալսարանի Էնդոկրինոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան
- ² Մ. Հերացու անվ. Երևանի պետական բժշկական համալսարանի պարթոլոգիական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան
- ³ Մ. Հերացու անվ. Երևանի պետական բժշկական համալսարանի գիտահետազոտական կենտրոն, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 23/11/2013թ., ընդունված է՝ 18/01/2014թ

Հետազոտությունն ընդգրկում է 2-րդ տիպի շաքարախտով 60 հիվանդ և 30 առողջ դոնոր: Իմունոֆերմենտային անալիզի (ELISA) միջոցով հիվանդների և դոնորների արյան մեջ որոշվել է ինտերլեյկին-2 (ԻԼ-2) և ինտերլեյկին-10 (ԻԼ-10) պարունակությունը, որը կատարվել է երկու սերիայով:

1-ին սերիայում նշված ցիտոկինների քանակն որոշվել է շաքարախտով հիվանդների, ինչպես նաև առողջ դոնորների արյան շիճուկում:

2-րդ սերիայում, *in vitro* պայմաններում, շաքարախտով հիվանդների արյան մոնոցիտների և լիմֆոցիտների կուլտիվացման պայմաններում ստացված սուպերնատանտներում Էմբրիոնալ հակաուռուցքային մոդուլյատոր ավելացնելիս որոշվել է ԻԼ-2-ի և ԻԼ-10-ի պարունակությունը:

2-րդ տիպի շաքարախտով հիվանդների արյան շիճուկում ԻԼ-2-ի պրոբորբոքային ցիտոկինը զգալիորեն աճում է (1,6 անգամ), իսկ ԻԼ-10-ի հակաբորբոքային ցիտոկինի պարունակությունը՝ կտրուկ նվազում (5,4 անգամ): 2-րդ տիպի շաքարախտով հիվանդների իմունոկոմպետենտ բջիջների կուլտուրալ միջավայր Էմբրիոնալ հակաուռուցքային մոդուլյատորի ավելացումը զուգորդվում է սուպերնատանտներում ԻԼ-2-ի մակարդակի ոչ մեծ չափի ավելացումով (1,4 անգամ)՝ համեմատած շաքարախտով հիվանդների արյան կուլտիվացման բջիջների սուպերնատանտներում առանց Էմբրիոնալ հակաուռուցքային մոդուլյատորի հետ: Միևնույն ժամանակ, շաքարախտով հիվանդների արյան բջիջների կուլտուրալ միջավայրին Էմբրիոնալ հակաուռուցքային մոդուլյատոր ավելացնելիս ԻԼ-10-ի մակարդակը զգալի բարձրանում է (2,7 անգամ)՝ համեմատած հիվանդների արյան սուպերնատանտներում առանց Էմբրիոնալ հակաուռուցքային մոդուլյատորի: Հաշվի առնելով ԻԼ-10-ի պլեյոտրոպ պոտենցիաները, շաքարախտով հիվանդների արյան մոնոցիտների և լիմֆոցիտների կուլտուրալ միջավայրին Էմբրիոնալ հակաուռուցքային մոդուլյատորի ավելացման պայմաններում նրա զգալի բարձրացումն անհրաժեշտ է դիտել ադապտիվ մեխանիզմների ձևավորման տեսակետներից, որոնք իրականացվում են իմունիտետի մեդիատոր ուղղության սահմաններում, քանի որ հայտնի է, որ ԻԼ-10-ը կորրեկցիաներ է ենթա-և հակաբորբոքային ցիտոկինների իմունոկոմպետենտ բջիջների հավասարակշռված սինթեզը: